ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-590-09.09.2014-ՊԻ-010/0*) վերաբերյալ:

Ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, համաձայն օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման, պայմանավորված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 29-ի ՍԴՈ-1000 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումն իրացնելու անհրաժեշտությամբ: Այսպես՝ օրենքի նախագծով նախատեսված է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 78-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1-ին մասով, որի համաձայն իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական կամ ֆիզիկական անձի իրավական վիճակն այլ

կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Մինչդեռ, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի, անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: Ստացվում է, որ օրենքի նախագծով առաջարկվող լրացումը վերաբերում է ոչ թե իրավական ակտի հետադարձ ուժին, այն է՝ իրավական ակտի տարածմանը՝ մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այլ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա դրա տարածմանը: Այդ առումով գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունումը՝ ներկայացված ձևակերպմամբ, չի բխում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից: Հետևաբար, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նույն որոշման 6-րդ կետի դրույթները, որոնց համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 78-րդ հոդվածում առկա է համապատասխան օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն, առաջարկում ենք օրենքի 78-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները կրկնող նշված ձևակերպումը թույլ կտա հետագայում խուսափել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան դրույթների վերաբերյալ հակասական մեկնաբանություններից, ինչպես նաև հնարավորություն

կընձեռի մասնավորեցնել նույն հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությամբ նախատեսված դրույթները:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ առաջարկվող տարբերակը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նշված որոշման մեջ ամրագրված այն մոտեցմանը, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն *ընդհանուր կանոն է*, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ *բացառություն ընդհանուր կանոնից*:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չի առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) հստակեցվում է իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական կամ ֆիզիկական անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող իրավական ակտերի գործողությունը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագիծը վերաբերում է *իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական կամ ֆիզիկական անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող իրավական ակտերի գործողության կանոնակարգմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

Եզրակացություն

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի թե ընդունումը, թե չընդունումը ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամուտների, ծախսերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխման չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-590-09.09.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 03-ի ՀՕ-320 օրենքի 78-րդ հոդվածը լրացնել նոր 1.1.-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական կամ ֆիզիկական անձի իրավական վիճակն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

Նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 29-ի ՍԴՈ-1000 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումն իրացնելու անհրաժեշտությամբ:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանն իր նշված որոշմամբ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաեւ՝ օրենք) 78-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին հակասող եւ անվավեր: Ըստ Սահմանադրական դատարանի դիրքորոշման, գործող Սահմանադրության համաձայն, ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Մինչդեռ, քննարկվող օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված նորմը, շեղվելով Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորման հիմքում ընկած իրավական ակտերի հետադարձ ուժի բացակայության կանխավարկածից, ամրագրում է այդ իրավական ակտերի հետադարձ ուժի առկայության կանխավարկածը՝ բացառությունը դարձնելով ընդհանուր կանոն: 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը կարգավորում էր միայն պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքի հետադարձ ուժի հարցը, իսկ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտերի հետադարձ ուժի հարցը ամբողջությամբ թողնված էր օրենսդրի հայեցողությանը, որը եւ կարգավորված էր «Իրավական ակտերի մասին» օրենքի 78-րդ հոդվածով: Մասնավորապես, նախատեսվում էր անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտերի հետադարձ ուժի առկայության կանխավարկածը: Մինչդեռ գործող Սահմանադրությունը, բացի քրեաիրավական ոլորտից, մնացած դեպքերի համար եւս ամրագրել է անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտերի հետադարձ ուժի բացակայության կանխավարկածը՝ հետադարձ ուժ տալու հարցը թողնելով իրավական ակտն ընդունող մարմնի հայեցողությանը:

Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթն իրավական ակտն ընդունած մարմնին չի պարտավորեցնում անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտ ընդունելու դեպքում դրան հետադարձ ուժ հաղորդել: Նշված դրույթն իրավական ակտն ընդունող մարմնի հայեցողությանն է թողնում անձի իրավական վիճակը բարելավող կամ պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելը, եւ եթե իրավական ակտը չի նախատեսում հետադարձության վերաբերյալ դրույթ, ապա իրավակիրառողը նոր իրավակարգավորումը կիրառում է միայն դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Սահմանադրական այս դրույթին համահունչ է քաղաքացիական օրենսգրքի 5-րդ հոդվածը, համաձայն որի՝ քաղաքացիական օրենսդրության ակտերը եւ այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն ու կիրառվում են ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ: Օրենքի գործողությունը մինչեւ դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում է միայն այն դեպքերում, երբ դա ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

Օրենքում լրացում կատարելը պայմանավորված է նաեւ նրանով, որ Սահմանադրության 117-րդ հոդվածի 1-ին կետի ուժով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից երկու տարվա ընթացքում անհրաժեշտ փոփոխություն պետք է կատարվեր նաեւ «Իրավական ակտերի մասին» օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասում՝ համապատասխանեցնելով այն Սահմանադրության փոփոխություններին, ինչը, սակայն, չի կատարվել: Ուստի նախագծի ընդունումը հնարավորություն կտա հաղթահարել Սահմանադրական դատարանի որոշման ընդունումից հետո «Իրավական ակտերի մասին» օրենքում առաջացած իրավակարգավորման բացը: